

## ՏԱԹԵՎԻԿ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քորամյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

### ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Ելնելով հարկային եկամուտների կառուցվածքից, ինչպես նաև տնտեսության ոլորտների հարկման առանձնահատկություններից, հատկապես տնտեսական ճգնաժամի ընթացքում, կարևորվեց հարկային համակարգի ինդիկատիվ գործառույթի պահանջների գնահատումը: Խոսքը վերաբերում է ՀՀ տնտեսական միջավայրին ու դրանում առկա վարչարարական ռիսկերի մեղմացմանը: Ավելին՝ որքան ժամանակին և անհրաժեշտ քանակությամբ հավաքագրվում են հարկային եկամուտները, այնքան ստացված արդյունքները օպտիմալ տեղաբաշխվում են պետության կողմից ֆիսկալ և սոցիալական քաղաքականությունների իրականացման համար, ինչն էլ նպաստում է ֆինանսական հարաբերությունների արդյունավետության, հարկային կարգապահության իրավիճակի, հարկային քազայի ավելացման հնարավորությունների բարձրացմանը:

Սույն հոդվածի շրջանակներում փորձենք բացահայտել հարկերի վճարումից խուսափելուն նպաստող և հարկային օրենքները խախտելուն ուղղված հիմնական գործոնները, որոնք, վերջին հաշվով, նպաստում են ստվերային եկամուտների ձևավորմանը: Բացի այդ, գտնում ենք, որ այդ հարցադրումները հետագայում կնպաստեն հարկային վարչարարության ոլորտում քոյլ կողմերի բացահայտմանը՝ հիմնավորելով հարկային բարեփոխումների իրականացման մոտիվացիան:

Աղյուսակ 1

#### Հարկերը չվճարելու կամ հարկային օրենքները խախտելու վարքագիծն ու դրանց օրինաչափությունները<sup>1</sup>

Գործոնները	Ընդհանուր բնութագիրը
Տնտեսվարող սուբյեկտների վարքագիծ	Կառուցվածքը (իրավաբանական և ֆիզիկական անձին՝ անհատ ձեռներեց), տնտեսվարող սուբյեկտների չափն ու գործունեության իրականացման ժամանակահատվածը, տնտեսական գործունեության տեսակն ու եկամուտների ձևավորման աղյուրներն ըստ աշխարհագրական տեղադրություն (ռեգիստր, ոչ ռեգիստր, ներքին և արտաքին շուկաներ), ֆինանսական տվյալներ (նախնական կապիտալ ներդրում), տնտեսվարող սուբյեկտների միջնորդների տեսակները:
Հարկման արդարության սկզբունքի պահպանում	Հարկման արդարության սկզբունքի տնտեսագիտական բովանդակությունը կայանում է նրանում, որ այն պարունակում է հարկային հարաբերության մեկ մասնակցի՝ հարկ վճարողի շահերի նկատմամբ մյուսի՝ պետության շահերի գերակայություն: Պետության շահերի գերակայության ապահովությունը հարկ վճարողի իրավունքների նկատմամբ նրա պարտականությունների սահմանման հետ՝ իմք ընդունելով, որ հարկագունադումը համապարտադիր և անհատույց բնույթ է կրում բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:
Հարկերի վճարման ընթացակարգերի վարչական բառ	ՀՀ հարկային օրենսդրության անկատարությունը և հարկային ծառայողների հետ գաղտնի համաձայնության գաղու հնարավորությունն այն հիմնական հանգամանքներն են, որ քոյլ են տալիս խուսափել հարկերից:
Ծյուղային գործոններ	Ծյուղի տեսակն ու չափը, դրա հիմնական ներկայացուցիչը, ծախսերի կառուցվածքն ու շահութաբերության նորման, կարգավորող ծյուղի աշխատանքային գործունեությունը, ծյուղային հարցեր (մրցակցության մակարդակ, սեզոնային գործոններ և ենթակառուցվածքների զարգացվածության աստիճան):
Սոցիոլոգիական գործոններ	Մշակութային նորմեր, էթիկական պատկանելություն, կառավարության մկատմամբ վերաբերմունք, տարիք, սեռ, կրության մակարդակ:

<sup>1</sup> Исследовательские записи Института Кавказа, "Экономика старн Южного Кавказа в период кризиса 2009-2010гг.". N5- Июль, 2011г. с. 36-39 (55с).

Գործողները	Ընդհանուր բնութագիրը
<b>Տնտեսական գործողները</b>	Ներդրումներ, տոկոսադրույքների դեմոգրաֆիական կառուցվածք, հարկային համակարգ, պետական քաղաքականության ուղղվածությունն ու միջազգային կազմակերպություններին ինտեգրման աստիճան, ինֆյացիա և շուկաներում մրցակցության աստիճան ու դրանց քաղաքականացված բնույթ:
<b>Հոգերանական գործողները</b>	Ազահուրյուն, ոխլ, վատահուրյուն, արժեքային համակարգ, արդարության և հավաստիության սկզբունքների փոխագրեցություն ու դրանց խախտման պատճառով հարկեր վճարելու խուսափելու իրական հնարավորություն:

Հարց է առաջանում. «Ինչպե՞ս են առաջանում ստվերային եկամուտները»: Այդ հարցի առումով, գտնում ենք, որ ստվերային եկամուտների առաջացումը ուղղակիորեն պայմանավորած է հարկերը չվճարելու կամ հարկային օրենքները խախտելու վարքագծից: Ընդ որում, վերջինիս վրա ազդում են քաղմաքիվ օրյեկտիվ և սուրյեկտիվ գործոններ, որոնց օրինաչափությունները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ, որոնց արդյունքները բերված են աղյուսակ 1-ում.

- Տնտեսավարող սուրյեկտները տարբեր կերպ են արձագանքում կոռուպցիոն և հարկերից խուսափելու երևույթներին: Օրինակ՝ անհատ ձեռներեցի համար հարկերը վճարելուց խուսափելու և հարկային օրենքները խախտելու վարքագծի հիմքում ընկած է նրա պարտաճանաչ լինելու, պատասխանատվություն կրելու, օրենքը գերակա համարելու անձնական հատկությունները: Իրավաբանական անձնաց համար ստվերային եկամուտներ առաջացնելու գործում հիմք է ընդունվում ընկերության մասնագիտացվածության բնույթը, ստվերում գործելու առաքելության գերակայությունը, համաշխարհային վարկանիշավորման անտեսումը և այլն<sup>1</sup>:
- Յուրաքանչյուր հարկ վճարողի համար հարկային քաղաքականության արդյունավետության աստիճանը, առաջին հերթին, պայմանավորված է նրանով, թե արդյոք հարկային բեռն իր համար նույնն է այլ հարկ վճարողների համեմատ, թե՝ ոչ: Ուստի, ցանկացած հարկ վճարող հարկման արդարության սկզբունքը գնահատում է՝ հիմք ընդունելով կամ հարկային բեռի մակարդակի համեմատական գնահատումը այլ հարկ վճարողների նկատմամբ, կամ հարկ վճարողների և հարկային ծառայողների և փոխհամաձայնեցված գործողությունների արդյունքում հարկվող եկամուտների բերհայտարարագրման փաստը:
- Հարկերի վճարման ընթացակարգերը բավականին ժամանակատար և ծախսատար են, ուստի դրանցից խուսափելու համար տնտեսավարող սուրյեկտները և հարկային ծառայողները գաղտնի և անօրինական համաձայնության են գալիս հարկային հաշվետվությունները մասնակի ներկայացնելու կամ դրանք, ընդհանրապես, չներկայացնելու համար<sup>2</sup>:
- Սոցիալական խնդիրների խորացումն ու եկամուտների անհավասարությունը ՀՀ տնտեսությունում ձևավորում են այնպիսի մրնողրոտ, որտեղ նույնիսկ պետական գործիչները հակված են լինում վարչարարական ոխսերին: Օրինակ՝ հարկային ծառայողների աշխատավարձի ցածր մակարդակը՝ այլ երկրների հետ համեմատած, նապատում է կոռուպցիոն ոխսի աճին, իսկ տնտեսավարող սուրյեկտների կողմից համապարտադիր և անհատույց բնույթը կրող հարկերի վճարումը պահանջում է օրինական դաշտում անցնել հարկային վարչարարության բավականին բարդ և «քանակաթեք» ճանապարհով: Երկու տարրեր օղակների տնտեսական շահերը հատվում են մեկ կետում. այն է՝ հարկվող եկամուտը բարցնելու, այն թերհայտարարագրելու և կոռուպցիոն ոխսկ առաջացնելու վարքագծի դրսերում<sup>3</sup>:
- ՀՀ տնտեսական օրենսդրության փոփոխումը և պաշտոնական մեկնաբանությունների անկանխատեսելիությունը, հարկային վարչարարության անբավարար մակարդակը ցույց է տալիս, որ հարկային համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունների մեջ

<sup>1</sup> ВСЕМИРНЫЙ БАНК, “Проведение налоговых проверок на основе системы оценки рисков: Подходы и опыт различных стран”, 2009 г. Вашингтон , стр. 46-47.

<sup>2</sup> Alm, J., R. Bahl, and M. Murray. 1993. “Audit Selection and Income Tax Underreporting in the Tax Compliance Game.” Journal of Development Economics 42 (1): 1–33p.

<sup>3</sup> Andreoni, J., B. Erard, and J. Feinstein. 1998. “Tax Compliance.” Journal of Economic Literature 36 (2). 60p. (818p.)

առանձնացվում է հարկային օրենքների դրույթների պարզեցումը, պահանջների հստակեցումը՝ ՀՀ օրենսդրության մեջ առկա անվտանգությունները և երկինաստությունները վերացնելու միջոցով: Իսկ դա հաճգեցնում է միմյանց հակասող իրավական նորմերի գործողության:

- Սոցիոլոգիական գործոնները, ինչպիսիք են՝ երկրի մշակութային նորմերը, եթնիկական պատկանելիությունը, կառավարության նկատմամբ վերաբերմունքը, տարիքը, սեռը, կրթության մակարդակը, բնորոշում են տվյալ երկրում հարկային մշակույթի ձևավորման նախադրյալները: Այսինքն՝ հարկագանձումն իրականացվում է ոչ միայն որպես պետական քյուջեում եկամուտ ապահովելու համար, այլ այն պատճառով, որ այդպիսին են խաղի կանոնները, դրանք հավասար են բոլորի համար, ուստի բոլորն էլ պետք է ենթարկվեն այդ կանոններին:
- Տնտեսական զարգացման ներկա փուլում առկա են այնպիսի տնտեսական գործոններ, որոնք նպաստում են հարկային քաղաքականության և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Կարելի է ասել, որ դրանք չեն պայմանավորած միայն հարկային գործիքներով և հարկային լծակներով: Հակառակը, մեր կողմից այս պահի դրությամբ անտեսվում են վերջիններիս կիրառման գործնական հնարավորությունները, և շեշտը դրվում է վարկային տոկոսադրույքների քաղաքականության վերանայմանը, բնակչության ժողովրդագրական կառուցվածքին, ՀՀ գործարար միջավայրի և միջազգային կազմակերպություններին հնատեղրման աստիճանի խորացմանը, ինֆյացիայի սպասումների միշտը այլ գործոնների վրա:
- Շուկայական տնտեսությունը իր հետ բերեց բազմաթիվ դրական փոփոխություններ՝ նպաստելով գործարար միջավայրում գործող տնտեսվարող սուբյեկտներ կառավարչական և ռազմավարական որոշումների ազատական և ինքնուրույն դիրքորոշում ունենալու անսահմանափակ հնարավորություններին: Սակայն, նոյնի հրավիճակում նրանց մոտ զարգանում են նաև հոգեբանական գործոններ, որոնք պայմանավորված են հարկ վճարողի անձնական և սուբյեկտիվ վարքագծի դրսերման առանձնահատկությունների հետ, ինչպիսիք են՝ ազահություն, ոփոկի գնալու կարողություն, վստահության, արժեքային համակարգի, արդարության և հավաստիության սկզբունքների փոխազդեցություն և այլն:

Այսպիսով, հարկերը չվճարելու կամ հարկային օրենքները խախտելու վարքագծերն ու դրանց օրինաչափությունները, ինչն էլ պահանջվում էր հիմնավորել, նպաստում են ստվերային եկամուտների առաջացմանը:

Բացի այդ, ՀՀ-ում հարկային օրենքները խախտելու և հարկերը վճարելուց խուսափելու համար հարկային քաղաքականության մեջ առանցքային դեր է կատարում նաև հարկային ստուգումների համակարգը: Գտնում ենք, որ սույն համակարգում կարևոր դեր ունի հարկային ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացման և եթիկական նորմերի խստացմանն ուղղված պետական քաղաքականության լծակը: Վերջինս, ի վերջո, կտանի ՀՀ-ում ստվերային եկամուտների չեզոքացմանն ու հարկային վարչարարության արդյունավետության աստիճանի բարձրացմանը:

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԿԵՐԸ ԶՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ**

**ՏԱԹԵՎԻԿ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ Ս. Քորամյանի անվան  
անտեսագիտության ինստիտուտի  
ասպիրանտ**

**Համառոտագիր**

Սույն հոդվածի շրջանակներում փորձեն ենք բացահայտել հարկերի վճարումից խուսափելուն նպաստող և հարկային օրենքները խախտելուն ուղղված հիմնական գործոնները, որոնք, վերջին հաշվով, նպաստում են սովորային եկամուտների ձևավորմանը: Բացի այդ, ներկայացված խնդրի լուծման համար առաջարկվել է կատարելազորդել հարկային ստուգումների համակարգը՝ կարենություն հարկային ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացմանը և էրիկական նորմների խստացմանն ուղղված պետական քաղաքականության լծակը: Վերջին, ի վերջ, կտանի ՀՀ-ում սովորային եկամուտների չեզոքացմանն ու հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:

**Քանակի բառեր.** հարկային վարչարարություն, ֆիսկալ քաղաքականություն, ֆինանսական հարաբերություններ, սովորային եկամուտներ, տնտեսվարող սույնելուններ, եկամուտների անհավասարություն, վարկային սոլուսոնություն, հարկային ստուգումներ:

**ТЕОРЕТИЧЕСКИЕ АСПЕКТЫ ОЦЕНКИ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ СОГЛАСНО ТЕОРИИ  
ПОВЕДЕНИЯ НАЛОГОПЛАТЕЛЬЩИКОВ ПРИ НЕУПЛАТЕ НАЛОГОВ И НАРУШЕНИИ НАЛОГОВЫХ ЗАКОНОВ**

**ՏԱԹԵՎԻԿ ՊԱՐՍԱԴԱՆՅԱՆ**

*аспирант Института экономики  
им. М. Котаняна НАН РА*

**Аннотация**

В рамках данной статьи сделана попытка выявить основные факторы, способствующие уклонению от уплаты налогов и направленные на нарушение налоговых законов, которые, в конечном счете, содействуют формированию теневых доходов. Кроме того, для решения представленной задачи предлагается совершенствовать систему налоговых проверок с учетом важности рычага государственной политики, направленной на повышение профессиональных способностей налоговых служащих и усиление этических норм. Последнее, в конце концов, должно привести к нейтрализации теневой экономики и повышению эффективности налогового администрирования.

**Ключевые слова:** налоговое администрирование, фискальная политика, финансовые отношения, теневые доходы, хозяйствующие субъекты, неравенство доходов, кредитная ставка, налоговые проверки.

**THEORETICAL ISSUES ON ASSESSMENT OF EFFICIENCY OF TAX ADMINISTRATION ACCORDING TO  
ECONOMIC THEORY OF TAXPAYER COMPLIANCE BEHAVIOR WITH TAX LAWS**

**TATEVIK PARSDANYAN**

*Ph.D. Student  
M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences  
Republic of Armenia*

**Abstract**

The article attempts to identify the main factors that affect tax non-compliance behavior with tax laws (breaking laws, and tax evasion practices) that eventually lead to increase in unregistered income. Moreover, in order to address tax non-compliance behavior, the author proposes to improve the system of tax inspections by stressing the role of state policy as a lever in enhancing professional skills and strengthening the ethical competence of tax officers. The later one, finally, would lead to decline in unregistered income and more efficient tax administration in the Republic of Armenia.

**Keywords:** tax administration, fiscal policy, financial relations, unregistered income, legal entity, income inequality, loan interest rates, integrated tax auditing.